THE ADMINISTRATION OF
KARMIRGUKH
GEGARKUNIK REGION REPUBLIK
OF ARMENIA

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ
АДМИНИСТРАЦИЯ ОБЩИНЫ
С. КАРМИРГЮХ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Կարմիրգյուղ Գարեգին Նժդեհի փող. 4/1
Հեռ. (0264) 6-06-96, (0264) 6-06-99
karmirgyugh@gmail.com

N23/53

«04» 03 2013թ.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կարմիրգյուղի գյուղապետարանը կից ներկայացնում է համայնքի ղեկավարի թիվ 3 և 4 որոշումները:

Կարմիրգյուղ համայնքի ղեկավար՝ Մ. Դանիելյան

05 03 2013թ.
1164-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ, 0(264) 6-06-96 0(264)6-06-99 karmirgyugh@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2013թվականի N 3-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, շինությունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության "Հողային օրենսգրքի" 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժիներատրանսպորտային օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված և քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան չի հակասում փողոցի ճարտարապետական ընդհանուր նկարագրին ու կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խաղտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված ավտոտնակի, անասնագոմի և դրա սպասարկման համար գյուղապետի կողմից հաստատված հատակագծերը, Լիդա Խաչիկյանի 2013 թվականի փետրվարի 21-ի դիմումը՝ *որոշում եմ*

1. Օրինականացնել Կարմիրգյուղ համայնքի Գարեգին Նժդեհի փող. 16 հասցեում գտնվող քաղաքացի Լիդա Սիրականի Խաչիկյանի սեփականություն հանդիսացող /ժառանգության վկայագիր 07.02.2013թ. գրանցված սեղանամատյան 218 / 05-056-031-034 ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված՝ ավտոտնակը և անասնագոմը 67.93 քմ:

2. Սույն որոշման ընդունման օրվանից շինության օրինականացման համար սահմանված 44834 /քառասունչորս հազար ութ հարյուր երեսունչորս/ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Շինությունը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՇԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ, 0(264) 6-06-96 0(264)6-06-99 karmirgyugh@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2013թվականի N 4-Ա

Կարմիրգյուղ համայնքի Գարեգին Նժդեհի փող. 16 հասցեի հողամասի շենք շինությունների նկատմամբ Լիդա Սիրականի Խաչիկյանի և Սամվել Վրույրի Խաչիկյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին.

Ղեկավարվելով << Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> 10.06.2008թ. ընդունված ՀՀ ՀՕ-117 օրենքով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. "Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի լիազոր մարմին սահմանելու մասին" թիվ 2387-Ն որոշման, ՀՀ ՏԻՄ օրենքի 32-րդ հոդվածի 17 կետի պահանջներով: Հարցի քննարկմանը հիմք է հանդիսացել Լիդա Սիրականի Խաչիկյանի /ծնվ.1933թ./ և Սամվել Վրույրի Խաչիկյանի /ծնվ. 1966թ./ դիմումը: Տեղագրական հանույթի /կադաստրային քարտեզի/ ճշտումից / չափագրվել է կոդ 031-034 մակերեսը կազմում է 0.162 հա / պարզվել է, որ Կարմիրգյուղ համայնքի Գարեգին Նժդեհի փող. 16 հասցեում գտնվող 0.162 հա հողամասը և նրա վրա կառուցված շենք շինությունները չեն ստացել առաջին պետական գրանցում, որը 1/2 բաժնի նկատմամբ սեփականության իրավունքով և 1/2 բաժնի նկատմամբ ժառանգության իրավունքով պատկանում է Լիդա Սիրականի Խաչիկյանին և Սամվել Վրույրի Խաչիկյանին: Հաշվի առնելով, որ հողամասի վրա կառուցված շենքը կառուցվել է 1965թ.-ին և նկատի ունենալով, որ Գարեգին Նժդեհի փող. 16 հասցի բնակելի տան կառուցման և սպասարկման համար չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և այն չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ինչպես նաև ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ. որոշում եմ

1. Վերականգնել Կարմիրգյուղ համայնքի Գարեգին Նժդեհի փող. 16 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Լիդա Սիրականի Խաչիկյանի և Սամվել Վրույրի Խաչիկյանի հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցապատման և սպասարկման համար հատկացված 0.162 հա մակերեսով հողամասի չափով, ճանաչել նրա սեփականության իրավունքը 0.162 հա հողամասի և դրա վրա գտնվող շենք շինությունների /կառուցված 1965թ./ նկատմամբ՝ որպես օրինական գույք:
2. Շենք շինությունը չեն հակասում քաղաքաշինական նորմաներին և դրա մակերեսները ենթակա են ճման ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գավառի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Հողամասի սահմանները որոշվում են Կարմիրգյուղի գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի կողմից տրված գլխավոր հատակագծով:
4. Բնակելի տանը տրամադրել Կարմիրգյուղ համայնքի Գարեգին Նժդեհի փող. 16 հասցե:
5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գավառի տարածքային ստորաբաժանում գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Կարմիրգյուղի գյուղապետարանի գլխավոր մասնագետ Ա. Մադոյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՇԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ